«ՀՈՒՄԵՅՆԱԿԱՆՆԵՐ» ՇԻԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ)

ՍԻՐԱՆՈՒՇ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Բանալի բառեր - Շիայականություն, Իրանի Իսլամական Հանրապետություն, իսլամ, Ադրբեջան, կրոնական կազմակերպություններ, բռնաճնշումներ, ռազմական-քաղաքական խմբավորում

ՄՈՒՏՔ

1979 թ. Իրանում հեղափոխության հաղթանակից և երկրում իսլամական համակարգ հաստատվելուց հետո, իրապես, արմատական փոփոխություն տեղի ունեցավ երկրի արտաքին քաղաքականության ոլորտում:

Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) արտաքին քաղաքականության հայեցակարգում հեղափոխության «արտահանմանն»[1] հատկացվել է առաջնային տեղ, որի շրջանակներում Իրանից դուրս՝ հատկապես շիայական շարժումներին քաղաքական, գաղափարական, ռազմական և այլ բնույթի աջակցությունը դիտարկվում էր կարևորագույն ուղղություն: Արդեն իսլամական հանրապետության կառուցակարգերի ձևավորումից և ամրապնդումից հետո, Իմամ Խոմեյնին հեղափոխության արտահանման մի գաղափարախոսություն առաջ քաշեց, համաձայն որի՝ այն պետք է տեղի ունենա մշակութային, քարոզչական ուղիներով՝ ներկայացնելով իսլամական արժեքներն ու սկզբունքները և դրանք լուսաբանելով «կեղեքված ու ճնշման» տակ հայտնված մահմեդականների գի-

[1] Այս արտահայտությամբ բնորոշվում է Իրանի հեգեմոնիայի հնարավոր հաստատումը մուսուլմանական մյուս պետությունների նկատմամբ: Տե՛ս **Mousa A.**, The role in exporting Iranian culture nd revolution, Journal for Iranian studies(2), 2017, p. 23.

տակցության մակարդակը բարձրացնելու նպատակով, առանց այլ երկրների ներքին գործերին ուղղակի և ֆիզիկական միջամտության[1]:

«Հեղափոխության արտահանման» գաղափարին հավատարիմ հիմնական մարմինն Իսլամական Հեղափոխության Պահապանների Կորպուսն(ԻՀՊԿ) էր[2]: Արդեն 1982 թվականին իսլամական հեղափոխության մշակույթն ու արժեքները քարոզելու նպատակով ստեղծվել է «Իսլամական քարոզչություն»[պրսկ. Sāzmān-e tabliqāt-e eslāmī] կազմակերպությունը, որը զբաղվում է տարբեր լեզուներով գրքերի հրատարակմամբ, իսլամական կոնֆերանսների անցկացմամբ[3]:

Միևնույն ժամանակ Իրանը շարունակում էր համագործակցել բազմաթիվ երկրների ազատագրական շարժումների և ընդդիմադիր առաջնորդների հետ, այդ թվում՝ մշակութայինին և քարոզչականին զուգահեռ օգտագործելով դիվանագիտական և ռազմաքաղաքական այլ մեթոդներ:

Հեղափոխության արտահանման ուղղություններից էր Մերձավոր Արևելքի իսլամական շարժումների և շիա համայնքների հետ աշխատանքը (Պաղեստին, Լիբանան, Իրաք, Եմեն, Բահրեյն, Պակիստան, Աֆղանստան, Ադրբեջան և այլ երկրներ), կազմակերպչական և ֆինանսական աջակցությունը, զենքի մատակարարումը:

Իրաքում Սադամ Հուսեյնի վարչակարգի փլուզումից և շիա ժողովրդական աշխարհազորայինների ակտիվացումից հետո Իրանում առաջ եկավ, այսպես կոչված, «Դիմադրության առանցքի» [պրսկ. Mehvār-e moqāvemat][4] գաղափարախոսության ձևավորման մասին: Դիմադրության

---

[1]Ըստ Իմամ Խոմեյնիի ի՞նչ մեթոդներով են իրականացվում հեղափոխության արտահանումը այլ երկրներ, [պրսկ. Nahve-ye sodur-e enqlāb be kešvarhā-ye dīgar āz dīdgāh-e Emām Ḥomeīyī čegune āst?, 2019, https://bit.ly/3uo13ik (Հասանելի՝ 04.07.2022).

[2]**Чернова А.**, Влияние исламской революции на монархические режимы в персидском заливе, Известия Российского государственного педагогического университета им. А.И. Герцена, N 161, стр. 25, https://bit.ly/3sdG5lt, (Просмотренно 05.12.2021).

[3] **Cornell S., The politization of Islam in Azerbaijan, Washinhton, 2006 p. 42, տե՛ս նաև** Экспорт исламской революции, 18.01.2020, https://bit.ly/3v95M8M, (Просмотренно՝ 26.06.2022).

[4] Այս տերմինը Իրանը հաճախ օգտագործում է տարածաշրջանում իր դաշնակիցներին և իրանամետ զինյալ խմբավորումներին նշելու համար: Իրանական «Ǧomhuri-ye Eslāmī» (հայ.՝ Իսլամական Հանրապետություն) թերթն առաջին անգամ 2004թ. տերմինն օգտագործել է՝ անդրադառնալով Իրաքում շիաների ապստամբությանը: Տե՛ս **Seyezakerīyā R.**, **Doulatābādī B.**, **Rāveş B.**, «Դիմադրության առանցքի և ապագա կառավարման

առանցքը շիայական քաղաքական-ռազմական խմբավորումների և մուսուլմանական երկրների միջև չգրված դաշինք է: «Դիմադրության առանցքի» անդամներն են՝ Իրանի Իսլամական Հանրապետության հովանու ներքո ստեղծված ռազմական խմբավորումները, որոնք «Դիմադրության առանցքի» մաս են կազմում, իրաքյան շիա աշխարհազորայինները (արաբ. Hašd aš-ša'abī), Սիրիայի ազգային պաշտպանության ուժերը, եմենցի հութիները (արաբ. Ansar al-Islam), Լիբանանի Հեզբոլլահը, Աֆղանստանի Ֆաթեմյանների բանակը (պրսկ. Lašgar-e Fātemīūn), Ադրբեջանի հուսայնականներ (պրսկ.՝ Hüseynīyyun, ադրբ.՝ Hüseynçīlər) զորամիավորումը, Պակիստանի Զեյնաբականների բանակը (պրսկ. Lašgar-e Zeynabīūn) և պաղեստինյան Համասը: Վերոնշյալ խմբավորումները չնայած որոշակի գաղափարական տարակարծություններին կարողանում են իրանական անմիջական նախաձեռնողականության պայմաններում հանդես գալ համախումբ կերպով, կոնկրետ տարածքներում փորձելով լուծել ոչ միայն քարոզչական, այլ նաև ռազմաքաղաքական խնդիրներ, ըստ էության ձևավորելով Իրանի ազդեցության և անվտանգության տիրույթ դիտարկվող այն աշխարհաքաղաքական արեալը, որը հաճախ կոչվում է շիայական կիսալուսին[1]:

Փաստացիորեն, 1991թ. անկախություն ձեռք բերելուց հետո Ադրբեջանը դարձավ իրանական կրոնական քարոզչության համար պարարտ հող՝ հաշվի առնելով այս երկրի ներսում ավանդաբար շիա բնակչության մեծամասնություն լինելու հանգամանքը, ինչպես նաև խորհրդային աթեիստական համակարգի փլուզման պայմաններում կրոնական զգացմունքների աճի միտումը մահմեդական բնակչություն ունեցող հետխորհրդայն ողջ տարածքում: Չնայած Ադրբեջանական Հանրապետութ-

---

համակարգի ուսումնասիրություն՝ հիմնված համաշխարհային համակարգի տեսության վրա»[պրսկ. Barresi-ye mehvar-e moqavemāt va āyande-ye nezām-e solte bā estefade az nazariye-ye cahāni], Թեհրան, 2017, էջ 9 // https://bit.ly/3v95M8M, (Հասանելի՝ 26.06.2022):

[1] **Сарабьев А.** , Ближневосточная «шиитская дуга»: реальная угроза ии геополитическая химера?, Вестник Московского Университета 11(2), Москва, 2019, //Алексеев В., «Шиитская дуга»- новая реальность Ближнего Востока? 08.01.2014, с. 39, https://bit.ly/3NVAckD (Վերջին դիտում՝ 10.07.2022):

յան բնակչության մոտ 65-85 տոկոսը կազմում են շիաները[1], այնուամենայնիվ ԱՀ-ում շիա իսլամի քաղաքական դաշտ բերելու փորձերը հիմնականում կապված են ԻԻՀ ազդեցության հետ, քանի որ վերջինս Ադրբեջանի վրա ճնշում գործադրելու և այդ երկրից սպասվող սպառնալիքները չեզոքացնելու նպատակով իր ունեցած գոծիքակազմի շրջանակներում թերևս որպես ամենաազդեցիկ լծակ մինչև օրս օգտագործում է հենց «իսլամական հեղափոխության արտահանման» վերոնշյալ հայեցակարգի առանցքային գործոն քաղաքական իսլամը՝ այս դեպքում իր շիայական դրսևորմամբ: Պաշտոնական Թեհրանը իր պոտեցիալ գերակայության տիրույթ է դիտարկում Ադրբեջանական Հանրապետության ողջ տարածքը, այդ թվում այնպիսի խոշոր քաղաքական, տնտեսական և մշակութային կենտրոններ, ինչպիսիք են Ափշերոնյան թերակղզին, Գանձակը և այլն: Իրեց հերթին Ադրբեջանի իշխանությունները, մշտապես զգուշանալով Իրանի կրոնական ազդեցությունից և մտավախություն ունենալով, որ Իրանը ցանկանում է փոխել այդ երկրի կառավարման համակարգը, այն աշխարհիկ պետությունից վերածելով թեոկրատական պետության, սկսեցին շիաներին կասկածել իրանական կողմնորոշման մեջ և կրոնական խիստ վերահսկողություն սահմանել:

«Հուսեյնականներ շարժում» (աղբբ. Azərbaycan Islam Müqavimət Hərəkatı, Hüseyniyyun, Hüseynçilər)

Ադրբեջանում գոյություն ունեցող շիայական կազմակերպությունները և կառույցները բաժանված լինելով պաշտոնական գրանցված և գրանցում չունեցող խմբերի միջև, ենթարկվելով Բաքվի կենտրոնական իշխանությունների բռնաճնշումներին՝ շատ հաճախ գործում են ընդհատակյա կամ կիսալեգալ կարգավիճակով՝ վայելելով իրանական աջակցությունը, չնայած այդ մասին պաշտոնական Թեհրանից որևէ հայտարարություն չի հնչում[2]: Գործելով շիայական գափարախոսության ազդե-

---

[1] U. S. Department of State. "USCIRF Annual Report 2013 - Tier 2: Azerbaijan,2013, http://www.refworld.org/docid/51826ef0f.html (Վերջին դիտում՝ 10.07.2022).

[2] Իրանը իր կրոնական քաղաքականությունը Ադրբեջանում իրականացնում է հստակ գործիքակազմով՝ իսլամական քարոզիչների, բարեգործական կազմակերպությունների, Իրանի մշակութային կենտրոնի, մզկիթներին կից կրթական ճեմարանների, շիայական կրոնական գրականության տարածման միջոցով:

ցությամբ և բացահայտ կերպով մերժելով Ադրբեջանի աշխարհիկ բնույթը՝ Ադրբեջանում գործող շիայական կազմակերպությունները կիրառում են վերոնշյալ «Դիամադրության առանցքի» մի շարք բաղադրիչներ[1]:

Ադրբեջանում գործող շիայական կրոնական կազմակերպություններից «Հուսեյնականների» սաղմերը դրվել է 2001թ. Ադրբեջանի հարավային Յարդըմլի և Մասալլի շրջաններում, որի անդամները հիմնականում լինելով «Իմամ Խոմեյնիի անվան կրթաթոշակ» ստացող ուսանողներ՝ Գանձակից, Նախիջևանից և հարավային շրջաններից, իրենց հերթին տարածում էին այս իրանամետ շիայական կազմակերպության գրականությունը և գաղափարախոսությունը[2]:

Արդեն իրանաադրբեջանական հարաբերությունների լարման ֆոնին բավական ակտիվացան վերոնշյալ «Դիմադրության առանցքի» մաս կազմող «Հուսեյնականներ շարժում» ռազմականացված շիայական կազմակերպության վերաբերյալ տեղեկատվական հոսքերը:

«Հուսեյնականներ շարժումը» արդեն որպես կիսառազմական խմբավորում պաշտոնապես կազմավորվել է 2016թ. սկզբին՝ Իրանի Ղոմ և Մաշհադ քաղաքներում սովորող 14 ուսանողներից՝ Թոհիդ Իբրահիմբեյլիի գլխավորությամբ[3], ովքեր Սիրիայում ռազմական պատրաստություն անցնելուց հետո վերադաձան Ադրբեջան: Շարժման ղեկավար Թ. Իբրահիմբեյլին 2002թ. ընդունվելով Մաշհադի ճեմարան և այժմ ապրելով Իրանում[4], հանդիսանում է Իլհամ Ալիևի վարչակարգի խիստ քննադատը,

---

[1] Նշվածի համար անհերքելի օրինակ են հանդիսանում տարբերանշանների վրա առկա դեղին և կանաչ գույների առկայությունը, բռունցքի մեջ ինքնաձիգ, երկրագունդ, Ղուրան, սուր, որոնք համապատասխանաբար խորհրդանշում են ռազմական պայքար իմպերիալիստական պետությունների դեմ, շիա իսլամական գաղափարախոսության գերակայություն Մերձավոր Արևելքում և այլ գաղափարներ:

[2] **Yunusov A.,** 2013, The islamic factor in Azerbaijan, Baku, p. 42 :

[3] Թոհիդ Իբրահիմբեյլին Իրանում կրոնական լուսավորիչների մասնակցությամբ «Հուսեյնյյուն» (հուսեյնիններ) անվամբ զինված խմբավորում է ստեղծել [աղբբ. Tohid İbrahimbəyli İranda dini təhsil alan şəxslərin iştirakı ilə "Hüseyniyyun" (Hüseynçilər) adlı silahlı dəstə yaradıb], 26.07.2018, (07.01.2022), http://ikisahil.az/post/101226-news-101226, Հասանելի՝ 07.01.2022)

[4] Հուսեյնականների կազմավորումը երջանկահիշատակ գեներալ Սոլեյմանիի ջանքերի և հովհանավորության արդյունք [պրսկ.Taškīl-e Hoseynīyyun marhun-e basiriyat va hemāyatha-ye Hāğ Ğāsem āst], 11.10.2021թ., https://bit.ly/3LXiOvT , (Հասանելի՝ 10.01.2022):

ով հայտարարել է, որ շարժման նպատակը դիմադրության հիման վրա ԱՀ շիաների կրոնական զգացողությունների հզորացումն է[1]:

Չնայած «Հուսեյնիականներ շարժումը» սկզբնապես հայտարարել էր, որ իր միակ նպատակը Սիրիայում «Դիմադրության առանցքի» ուժեղացումն ու ահաբեկչական ծայրահեղականներին հակազդելն է՝ հետագայում նպատակ չունենալով ընդլայնել իր գործունեությունը Ադրբեջանում, այդուհանդերձ այս շարժումը բնութագրվում է որպես Իրանի նոր «վստահված ուժ» այս անգամ Ադրբեջանում, որը մեծ նմանություն ունի «Դիմադրության առանցքի» վերը նշված մյուս ուժերին[2]:

Հատկանշական է նաև այն փաստը, որ այս խմբավորումը որպես «Հուսեյնականներ շարժում» անվանակոչվել է 2017թ. ԻՀՊԿ Ղոդս հատուկ ստորաբաժանման երբեմնի հրամանատար Ղասեմ Սոլեյմանիի կողմից, որի համար հիմք է հանդիսացել այն փաստը, որ կրոնական ծեսերի ժամանակ շիաները հաճախ հանդես էին գալիս «Ադրբեջանը հուսեյնականների երկիրն է» կարգախոսով[3]:

«Հուսեյնականներ շարժումը» կառուցվածքի, ծրագրերի և ղեկավարության մասին մանրամասները սակավ լինելով հանդերձ, հայտնի է, որ 2013 թվականին Թոհիդ Իբրահիմբեյլին հանդիպել է Իրանի առաջնորդ Սեյյեդ Ալի Խամենեիի հետ որպես «Ադրբեջանի Հանրապետության մարտնչող հոգևորականների ասամբլեայի» նախագահ, որի ընթացքում խոսել են Ադրբեջանական Հանրապետությունում շիա բանտարկյալների

---

[1] Middle East Manitor-ի անդրադարձը Ադրբեջանի «Հուսեյնականների» շարժմանը/դիմադրության առանցքը Բաքվի սրտում, [պրսկ. Ravāyet-e «Middle East Monitor» az ğonbeš-e «Hoseyniyyun»-e Āzarbāyğān/Moqāvemat dar qalb-e Bāku], 11.10.2021թ., https://bit.ly/3sWkrS1, (Հասանելի՝ 23.01.2022)

[2] Հուսեյնականներ, Իրանի Ղոդս խմբավորման նոր պրոքսի ուժերը Ադրբեջանում, [պրսկ.Hoseynīyyun, niruhā-ye niābati-ye ğadid-e Sepāh-e Qods dar Āzarbāīğān, [պրսկ.Hoseynīyyun, niruhā-ye niābati-ye ğadid-e Sepāh-e Qods dar Āzarbāīğān], https://bit.ly/3s7dZZd , (Հասանելի՝ 20.01.2022).

[3] Հուսեյնյյուն ջոկատի հիմնադիր. Հուսեյնյյուն կազմավորումը երջանկահիշատակ գեներալ Սոլեյմանիի ջանքերի և հովհանավորության արդյունքը, [պրսկ.Muwses-e tip-e Hoseynīyyun: Taškīl-e Hoseynīyyun marhun-e basiriyat va hemāyatha-ye sardār Soleymānī āst], 12.10.2021թ., mshrgh.ir/1284522 , (Հասանելի՝ 23.01.2022)

իրավիճակի մասին[1]: Իսկ արդեն 2017թ. Թ. Իբրահիմբեյլին Զանջանում ներկա գտնվելով «Նարդարանի նահատակների հուշահամալիրի» բացման արարողությանը՝ անդրադարձել է 2015թ. Նարդարանի շիա բնակիչների նկատմամբ ադրբեջանական հատուկ նշանակության ոստիկանական ուժերի կողմից կազմակերպված արյունալի դեպքերին[2] : Իրանի հետ «Հուսեյնականներ շարժման» սերտ հարաբերությունների մասին է վկայում նաև այն փաստը, որ սույն շիայական խմբավորումը շնորհավորական ուղերձ է հղել սեյյեդ Էբրահիմ Ռայիսիին՝ 2022թ. նախագահական ընտրություններում հաղթելու կապակցությամբ[3]:

Հատկանշական է, որ Սյունիքի շուրջ Իրանի և Ադրբեջանի Հանրապետության միջև դիվանագիտական վեճերից հետո «Հոսեյնականներ շարժման» հայտարարությունը, որտեղ մասնավորապես նշված է.«Սիրելի ադրբեջանցիներ. Ալիևի ռեժիմը Ադրբեջանին ներքաշում է մեծ ճահիճի մեջ. Իսրայելի ռեժիմը և Էրդողանի այլանդակ ծրագրերը կարող են շուտով հրկիզել Ադրբեջանը ... Մեզ օտար բանակներ և ահաբեկիչներ պետք չեն. «Ադրբեջանի ժողովուրդը, հատկապես մեր երիտասարդությունը, չպետք է դառնա Ալիևի ընտանիքի հում երազանքների զոհը...»[4]:

---

[1] Իսլամական զարթոնքի համաժողովի ադրբեջանցի մասնակիցների հանդիպումը հեղափոխության բարձրագույն առաջնորդի հետ , [պրսկ. Dīdār-e namāyadegān-e Āzarī konfrāns-e bīdārī-ye eslāmī bā rahbar-e moʿ azam-e enqlāb], http://fa.arannews.com/news :(Հասանելի՝ 01.10.2021).

[2] Շեյխ Թոհիդ Իբրահիմբեյլին Զանջանում ի հիշատակ Նարդարանի նահատակների. Նարդարանը Կենտրոնական Ասիայում և Կովկասում սիոնիզմի, ԱՄՆ-ի դեմ թշնամության և դիմադրության առանցքի խորհրդանիշն է [պրսկ. Šeyḫ Tūhīd Ībrāhimbeyli dar yādavār-e šohadā-ye Nārdārān dar Zanǧān: Nārdārān dar Āsīā-ye mīāne va Qafqāz, namād- e došmani bā sehyūnism, Āmerikā va namād- e moqāvemat āst], https://bit.ly/3AGycte , 01.12.2017, (Հասանելի՝ 20.01.2022) :

[3] Ադրբեջանի դիմադրության շարժման շնորհավորական ուղերձը Ռայիսիին [պրսկ. Tabrik-e ǧonbeš-e moqāvemat eslāmī-ye Ǧomhurī-ye Āzarbāīǧān be Rayīsī], 30.03.2022, https://bit.ly/3Cq9wGK , (Հասանելի՝ 23.08.2022)

[4] Հոսեյնական շարժման գործունեությունը Ադրբեջանում, [պրսկ. Fāliyat-e ǧonbeš-e Hoseuniyyun dar Āzarbāyǧān], 04.11.2021, https://avapress.com/fa/252095, (Հասանելի՝ 23.02.2022).

Սիրիայում գտնվող «Հուսեյնականներ զորամիավորման» զորամիավորման անդամները, որոնցից են Յունես Սաֆարովը[1], Ֆալեղ Վալիեվը[2] և այլք Ադրբեջան վերադառնալուց հետո տարբեր պատճառներով բանտարկվել կամ արժանացել են ԱՀ կառավարության բռնաճնշումներին: Փաստացիորեն, հաշվի առնելով կրոնական կառույցների նկատմամբ ադրբեջանական իշխանությունների վարած կոշտ քաղաքականությունը՝ «Հուսեյնականներ շարժումը» որպես կազմակերպված ռազմական կազմակերպության գոյությունը երկարաժամկետ և նշանակալի քաղաքական հարված է ԱՀ-ի իշխող վարչակարգին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, վերը շարադրված փաստերը անվիճելիորեն ցույց են տալիս, որ Ադրբեջանը թեև լինելով աշխարհիկ պետություն, որտեղ մեծ է Թուրքիայի և Իսրայելի ազդեցությունը՝ Իրանը հետևողական և արդյունավետ քաղաքականություն է վարում՝ փորձելով իր կրոնական ազդեցությունը տարածել Ադրբեջանի նկատմամբ՝ ֆինանսավորելով ընդդիմադիր շիայական խմբերին: Մի կողմից քաղաքական գործիչները և պաշտոնյաները հայտարարում են երկրի ավանդական իսլամական արժեքների հանդեպ նվիրվածության մասին, մյուս կողմից Ադրբեջանում փակվում և նույնիսկ քանդվում են մզկիթներ, իսկ շիայական կազմակերպության ղեկավարները և անդամները դատապարտվում են ազատազրկման: Սկսած այն պահից, երբ ադրբեջանական իշխանությունները ԱՀ շիաների շրջանում իրանական ազդեցության մեծացումը սկսեցին դիտարկել որպես քաղաքական սպառնալիք, ձեռք առան բավական կոշտ քաղաքականություն այդ հարցում և իրականացրեցին գործողությունների այնպիսի համալիր, որի վերջնական նպատակն էր իրանական կրոնական ազդեցության նվազեցումը ԱՀ տարածքում: Ադրբեջանի իշխանությունները վերահսկողություն էին սահմանում կրոնական և կրոնաքաղաքական

---

[1] Հուսեյնական կազմակերպության ղեկավարը ասաց. «Յ. Սաֆարովն մեր անդամն է, սակայն…] [ադրբ.Hüseynçilər təşkilatının sədri danışdı: “Yunis Səfərov həqiqətən bizim üzvümüzdür, amma…], 19.07.2018, https://bit.ly/3PGhTRk : (Հասանելի՝ 21.08.2022).

[2] В Гяндже вынесен приговор арестованному в России Ф. Валиев, 25.09.2021, https://bit.ly/3QJbdDf , (Հասանելի՝ 23.08.2022).

ակտիվության ցանկացած դրսևորման դեմ, բազմաթիվ սահմանափակումների են ենթարկվում, մասնավորապես, հարավային շրջանի շիաները: Չնայած վերոնշյալ բռնաճնշումներին՝ շիայական գործոնը շարունակում է ազդեցիկ և որոշիչ դերակատարում ունենալ Ադրբեջանի ներքաղաքական կյանքում, ինչից Ադրբեջանի աշխարհիկ իշխանությունները սարսափում են:

Сирануш Варданян, «Хусейнитская» шиитская организацияшиитская организация в Азербайджанской Республике (обзор)- В данной статье рассмотрены проявления религиозной пропаганды Ирана в Азербайджане, представлены репрессии, проводимые на официальном уровне против шиитского населения Азербайджана. Тема очень актуальна в связи с тем, что показаны религиозные процессы, происходящие в Азербайджане, которые могут оказать существенное влияние на ряд региональных процессов. В этом контексте необходимо отметить, что в постсоветский период в результате жесткой и антидемократической политики, проводимой властями Азербайджанской Республики, различными течениями шиитского направления ислама и их идеологическими последователями, был быстро заполнен вакуум, образовавшийся в политической сфере данной страны в результате повышения роли религии в обществе. Фактически светские власти Азербайджана, обеспокоенные распространением исламских знаний среди населения, постепенным принятием исламских ценностей и образа жизни, проводят открытую антишиитскую политику. В статье говорится о факторах, с помощью которых Иран пытается распространить свое религиозное влияние на Азербайджан, а также о механизмах, с помощью которых Азербайджан противостоит религиозно-политическому влиянию Ирана.

Siranush Vardanyan, «The Husseins» Shiite organization in the Republic of Azerbaijan (overview) - This article presents the manifestations of Iran's religious propaganda in Azerbaijan, as well as the official repression against the Shiite population of Azerbaijan. The topic is topical, as it shows the religious processes taking place in Azerbaijan, which can have a significant impact on a

number of regional processes. In this context it is necessary to to mention that as a result of the harsh and anti-democratic policy of the Azerbaijan's authorities in the post-Soviet period, the role of religion in society increased, the vacuum created in the political life of that country was quickly started by different currents of the Shia direction of Islam and the figures who are their ideological followers. In fact, the secular authorities of Azerbaijan are worried about the expansion of the scope of Islamic knowledge among the public, the gradual adoption of Islamic values and lifestyle, and are carrying out an open anti-Shia policy. The article refers to the factors through which Iran tries to spread its religious influence in Azerbaijan, as well as the mechanisms by which Azerbaijan resists the religious-political influence of Iran.

Ուղարկվել է խմբագրություն 30.12.2022թ.
Գրախոսվել է 09.01.2023թ.
Ստորագրվել է տպագրության 10.01.2023թ.